Խմբակի ծրագիր

<<Հայասի>> պարի խմբակ

Երևանի Գ. Գուրզադյանի անվան հ. 163 հիմն. դպրոց

Հիմնական- 10-13 տարեկան/ 5-7 դասարան

ԺԱՄԱՔԱՆԱԿ

Շաբաթական- 2 ժ

Տարեկան- 68 ժ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

_մասնակիցների մոտ պատկերացում ձևավորել ազգային ոչ նյութական մշակույթի վերաբերյալ

-մասնակիցների մոտ առաջացնել սեր ազգային մշակույթի հանդեպ

-դպրոցում միջոցառումների ժամանակ գեղեցիկ պարերով մասնակցություն՝ ներգրավվածություն

-մարմնի շարժումների կարողությունների և հմտությունների ձևավորում:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.Ներկայացնել- պարի կարևորությունը, պարարվեստի սկզբնավորումը և պատմությունը, ազգային պարերի առանձնահակությունները

2.Ձևավորել և զարգացնել- սեր դեպի պարը և արվեստն առհասարակ, զարգացնել գեղագիտական ճաշակ, մարմնի շարժումների կարողություններ և հմտություններ,հայկական և տարբեր ազգերի պարերի համեմատություն

3.Նպաստել- տաղանդավոր և շնորհալի աշակերտների բացահայտմանը, պարային մաքուր կատարողականությանը, հայկական պարերի տեսական և գործնական իմացությանը

4.Արժևորել- սեփական մշակույթը, նրա կարևորությունը հայ մարդու դաստիարակման գործում;

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-ազգային մշակույթի ձևավորում և զարգացում

-գեղարվեստական մտածողության ձևավորում և զարգացում

-ընդհանուր զարգացման ապահովում

-խթանել ռազմահայրենասիրական դաստիարակությանը

-ազգային դաստիարակության և հայրենասիրության ամրապնդում

-վերադարձ դեպի արմատներ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

Խմբակի անդամները կկարողանան

-ծանոթանալ պարարվեստի մշակութային արժեքներին, ժողովրդականավանդույթներին

-պարային բեմադրություններում ճիշտ և գրագետ շարժումներ օգտագործել և կիրառել

- կծանոթանան տարբեր ազգերիմշակույթին

-միջոցառումներին գեղեցիկ ներկայանալ:

ԾՐԱԳԻՐ, ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1.Պարի հիմք(ոտքերի , ձեռքերի դիրքեր , տրինաժ, ձեռքերի պլաստիկ շարժումների մշակում)- 10 ժ
2.<<Ազգագրական պարերի շարան>>-15ժ
3.<<Պոպուրի պարի ուսուցում>>-15ժ
4.<<Հայուհի>> պար-10ժ
5.<<Վրացական >> պար-10ժ
6. <<Տոնական>> պար-8 ժ